ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4187-Ա « 28 » օգոստոսի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի Հ.3729-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, քաղաքացիական օրենսգրքի 620-րդ և 621-րդ հոդվածներով, հաշվի առնելով քաղաքացի Գոհարիկ Ավագյանի՝ ի դեմս ներկայացուցչի 20.03.2026թ. հ.Դ-57651-26 դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2025 թվականի սեպտեմբերի 11-ի «Կառույցի և դրա համար առանձնացված հողամասի վարձակալության պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու, պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» հ.3729-Ա որոշումը լրացնել նոր՝ 1.1. և 1.2. կետերով, հետևյալ բովանդակությամբ.

«1.1.Թույլատրել քաղաքացի Գոհարիկ Ավագյանին (Վարձակալ), Երևանի քաղաքապետի 31.07.2007թ. հ.2545-Ա որոշմամբ վարձակալությամբ իրեն տրամադրված՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող, Օրբելի փողոցի հ.65/2 հասցեում գտնվող 156.12 քառ.մետր ընդհանուր մակերեսով արտադրական կառույցը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 02.07.2007թ. հ.2245946 վկայական) և նույն հասցեում՝ կառույցի համար առանձնացված 78.06 քառ. մետր մակերեսով հողամասը (գլխավոր հատակագիծ հ.812-2007 տրված 15.06.2007թ.) հանձնել ենթավարձակալության:

1.2. Սահմանել, որ.

1) սույն որոշման 1.1. կետում նշված հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի 31.07.2007թ. հ.2545-Ա որոշմամբ 15.06.2007թ. տրված հ.812-2007 գլխավոր հատակագծով.

2) սույն որոշման 1.1. կետում նշված կառույցը և դրա համար առանձնացված հողամասը կարող են տրամադրվել ենթավարձակալության մինչև Երևանի քաղաքապետարանի և քաղաքացի Գոհարիկ Ավագյանի միջև 09.08.2007թ. կնքված և նոտարական կարգով վավերացված (29.08.2007թ. հ.7159)՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող կառույցի և դրա համար առանձնացված հողամասի վարձակալության հ.Վ-42-2545-Ա պայմանագրի 3-րդ կետով նախատեսված ժամկետի ավարտը:»:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

3.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ